ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 24.6[30722]

Հայաստանի Հանրապետության անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի (ՀՀԱՎԶՀ) հոգաբարձուների խորհրդի նիստի

ք. Երևան **12 փետրվարի 2010թ.**

Նախագահում էր
Հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ ՀՀ վարչապետ
Տ. Սարգսյան
Մասնակցում էին

Գ. Ալավերդյան	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Ե. Զախարյան	ՀՀ կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ
Տ.Մարգարյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ
Ռ. Ալավերդյան	ՀՀ քաղաքաշինության նախարարի տեղակալ
Ա. Քոչարյան	ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Ղուլարյան	ՀՀ Տավուշի մարզպետ
Ս. Սահակյան	ՀՀ Արագածոտնի մարզպետ
Վ. Մաթևոսյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Մ. Մաթևոսյան	«Հայանտառ»ՊՈԱԿ-ի գլխ. տնօրեն
Հ. Սանասարյան	Կանաչների միության նախագահ
Կ. Դանիելյան	Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիայի նախագահ
Վ . Մովսիսյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն
Կ. Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության պետ
Ա.Մարգարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության գլխավոր մասնագետ

Լ. Գրիգորյան	ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գլխավոր հաշվապահ
Ա.Գասպարյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպանական վարչության փորձագետ

1. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2009 թվականի հաշվետվությունը՝ հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին

(Վ. Մովսիսյան, Հ. Սանասարյան, Կ.Դանիելյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն և հաստատել՝ ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի 2009թ. հաշվետվությունը հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության մասին :

2. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2009թ. ֆինանսական հաշվետվության մասին:

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն և հաստատել՝ ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2009թ. ֆինանսական հաշվետվությունը:

3. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010թ. հաստիքացուցակի և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշվի մասին:

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

Ընդունել ի գիտություն և հաստատել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010թ. հաստիքացուցակը և գործադիր մարմնի պահպանման (վարչակառավարչական) ապարատի ծախսերի նախահաշիվը՝ 16290,25 հազար դրամ գումարով:

4. ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի 2010թ. իրականացվելիք ծրագրերի և ֆինանսավորման աղբյուրների մասին՝

(Վ. Մովսիսյան, Տ. Սարգսյան)

ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն Վ. Մովսիսյանի կողմից ներկայացվել են առաջարկություններ «Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (3-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 20 հեկտարի վրա ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման մասին (առաջարկությունը կցվում է) և Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում 25 հեկտար տարածքի անտառապատման և ցանկապատման մասին:

Որոշվեց՝ 1. Հաստատել «Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (3-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 20 հեկտարի վրա ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման ծրագիրը՝ 28,7 մլն. դրամ արժեքով:

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը, թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին

«Ծիծեռնակաբերդ հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնման» (3-րդ փուլ) ծրագրի շրջանակներում 20 հեկտարի վրա ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման և ոռոգման ցանցի վերակառուցման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով։

2. Հաստատել Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում 25 հեկտար տարածքի անտառապատման և ցանկապատման ծրագիրը՝22,8 մլն.դրամ արժեքով.

Հաշվի առնելով աշխատանքների շարունակականությունն ու հրատապությունը, թույլատրել ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենին Շիրակի մարզի անտառվերականգնման համալիր ծրագրի շարունակման շրջանակներում 25 հեկտար տարածքի անտառապատման և ցանկապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման և անատառապատման ու ցանկապատման աշխատանքների իրականացման կապալառու կազմակերպություններին ընտրել բանակցությունների միջոցով։

3. ՀՀ գյուղատնտեսության նախարար Գ. Ալավերդյանին և ՀՀ ֆինանսների նախարար Տ. Դավթյանին՝ 15-օրյա ժամկետում ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրինության հետ քննարկել և ներկայացնել առաջարկություն սույն արձանագրության 3-րդ և 4-րդ կետերով

նախատեսված աշխատանքների ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ։

ՀՀ վարչապետ

Հոգաբարձուների խորհրդի նախագահ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի գործադիր տնօրեն

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ